

Տ. ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ*

Սիրելի ներկաներ, մենք հավաքվել ենք այս դահլիճում՝ նշելու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակը: Ուրախություն է այսօր բոլորիս համար, որ Հայաստան աշխարհի պարամության, մշակույթի և հոգևոր վերագարթոնքի մեջ մեծ և իր չափով եզակի դեր ունեցած Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանն այսօր արդեն 130 տարեկան է և շուրջ մեկ ու կես դար իր կոչմանը հավաքարիմ իր մեծ ներդրումն է ունենում մեր Եկեղեցու, Հայրենիքի ու ժողովրդի կյանքում:

Մեր ժողովրդի լավագույն գնահատանքն է արտահայտվում հանդեպ այս նվիրական հասարակությունը նրանով, որ «Գևորգյան Ճեմարան» արտահայտությունը վաղուց արդեն մի առանձնակի զգացում և հիշողություն է արթնացնում ամեն մի հայորդու հոգում, որն անգամ հպանցիկ կերպով է ծանոթ մեր ժողովրդի պարամությանը:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ենթահողն այն բազում արմատներն են, որոնք տարածվում են պարամության խորքերում թաղված մեր հռչակավոր դպրության կենտրոնները՝ սընտնող տալով այսօր արդեն նորովի շնչող մեր նվիրական ճեմարանին: Գևորգյան Ճեմարանի ակունքները հասնում են մինչև հայ դպրոցի և մանկավարժության պարամության մեջ պարավար և անգնահատելի տեղ զբաղեցնող Ե դարի սկիզբ՝ Ս. Մահակ Հայրապետի, հայոց Վռամշապուհ մեծագործ արքայի և հանճարեղ Ս. Մեսրոպ վարդապետի կողմից հիմնադրված Վաղարշապատի առաջին դպրոցը, ուր, ինչպես Ս. Մեսրոպի կենսագիր Կորյուն վարդապետն է նշում, «*ի կողմսնց և ի զաւառսց Հայաստան աշխարհի հոյակապ և դրդեալք հասանէին բացեալ աղբւրն գիտութեանն Աստուծոյ*»:

Հենց այս դպրոցն էր հայոց բրիտոնեական նոր և բարձր արժեքների, ազգային հայալեզու ուրույն մշակույթի կրողն իր մեծ շրջանավարտներով և հարուստ մանկավարժական ավանդույթներով, որ դարձավ թթխմորը ապագա մեր բոլոր վարդապետարանների և դըպրության կենտրոնների մինչև այսօր:

Սկսված նոր հազարամյակում ևս Գևորգյան Հոգևոր Ճեմարանը հոգևոր և իրավական ժառանգորդն է մեր դարավոր ուսումնագիտական կենտրոնների, վարդապետարանների և հռչակավոր համալսարանների:

Հայաշունչ մեր դպրանոցներում կերտվեցին ու զարգացան ուսումնական-կրթական այն ավանդներն ու արժեքները, որոնց լիիրավ կրողը և շարունակողն այսօր մեր նվիրական Ճեմարանն է:

Նախորդ դարերում Աստվածընտրի և հոգատար Հայոց Հայրապետներն իմաստնաբար մտաբանեցին հայրկապես մեր ուսումնական կենտրոնների արդյունավետ գործունեությանը և դրանց զարգացմամբ, ինչպես մոտ ժամանակներում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի

* Որպես զեկուցում կարդացվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակին նվիրված միջոցառմանը Ս. Էջմիածնում նոյեմբերի 3-ին:

աշխույժ ու եռանդուն ուսումնական ընթացքով մերօրյա ուսումնասեր, բազմաշնորհ Հայրապետները:

Գևորգյան հոգևոր ճեմարանում կիրառվող ավանդույթների և ունեցած ժառանգության ձևավորողներից են եղել Տաթևի համալսարանը՝ իր մեծանուն վարդապետներով՝ Հովհան Ռոտրևեցի, Գրիգոր Տաթևացի, Գլաձորի համալսարանը՝ Եսայի Նչեցի, Վանական վարդապետ, Մեծոփա վանքի ուսումնական կենտրոնը՝ Թովմա Մեծոփեցի, Մխիթար Սասնեղապետ, Մեծոփա վանքի ուսումնական կենտրոնը՝ Մխիթար Անեցի, Մաքենյաց վանքը՝ Սողոմոն Մաքենցի, Անիի ուսումնական կենտրոնը՝ Անանիա Սանահնեցի, Հովհաննես Սարկավազնացի, Հաղպատի և Սանահինի վանքերը՝ Անանիա Սանահնեցի, Հովհաննես Սարկավազ վարդապետ և Գրիգոր Մազիսպրոս, Գոշավանքը՝ Մխիթար Գոշ, պարմական Կիլիկիայում հռոմկլայի Հայրապետանոցի դպրոցը, Տավրոսի լեռնաշղթայի մի թևը համարվող Սև լեռան ուսումնագիտական կենտրոնները, Արթակաղնի երաժշտագիտական դպրոցը, Մաշկևորի ուսումնագիտական կենտրոնը՝ Բարսեղ Մաշկևորցի կամ Բարսեղ Ճոն վարդապետ և այսպես շարունակ:

Պարմական դժնի ժամանակների բերումով եկավ մի շրջան, երբ մեր վանքերը խոնարհվեցին, ուսումնական վառ լույսը սկսեց մարմրել, անթեղվել, և մեր վանական համալիրների ուսումնագիտական, աստվածաբանական կենտրոններում առժամանակյա ծանր լուրջություն փրկեց: Հայ վանական համալսարաններում ու դպրոցներում փրկող այս լուրջյան մեջ կարծես արձագանքում էին Պարմահոր ողբի խոսքերը. *«Ողբում զքեզ, Հայոց աշխարհ, ողբում զքեզ, հանուրց հիսսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր եւ քահանայ, խորհրդական եւ ուսուցող Ո՛վ այսուհետեւ զմերս յարգեացէ զուսումն. ո՛վ ուրախացի ընդ յառաջադիմութիւն աշակերտիւ. ո՛վ զհայրական բարբառեացի զուարճութիւն, մատամբ ինչ յաղթահարեալ յորդոյս»:*

Աստված սակայն Հայոց ազգի միջից վեր հանեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի և նրա ազգից սերած Սրբազան Հայրապետների աստվածասեր ու ազգանվեր ոգին կրող նոր Հայրապետների, ովքեր մինչև այսօր փութաջանությամբ և նախանձախնդրությամբ գործում են թե՛ մեր ազգի ու հայրենիքի և թե՛ մեր վանական կենտրոնների վերականգնման ու դրանց ուսումնագիտական ավանդները շարունակող կրթական հաստատությունների պայծառացման ու բարգավաճման համար:

Այդ կաթողիկոսներից էր Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին: Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելով 1866 թվականին՝ նա նույն թվականի մայիսի 27-ին հրապարակեց իր անդրանիկ կոնդակը, որից արդեն երևում էր նորընտիր Հայրապետի նախանձախնդրությունը և մեծ հոգաբարությունն ազգային, հոգևոր-մշակութային մեր արժեքները պահպանելու և նորանոր նվաճումներով հարստացնելու գործում:

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Ամենայն Հայոց Հայրապետն իր կաթողիկոսության փարիներին ձեռնարկեց արևելահայ դպրոցների ուսումնական գործի կարգավորումը և նույնիսկ 1867 թվականին Էջմիածնում կազմակերպեց ուսումնական հանձնաժողով, որը որոշեց դպրոցներ բացել հայաբնակ բոլոր քաղաքներում և գյուղերում: Այս ժամանակաշրջանում փեսանելի էր այն բացը, որն առաջացել էր նաև եկեղեցական անդաստանից ներս ուսումնագիտական ոլորտում: Կրթությունը, գիտությունն ու ազգային մշակույթը կարևորող Կաթողիկոսը, անշուշտ, չէր կարող չմտածել նաև մեր վանական հոգակավոր դպրոցների հետևողությամբ Սուրբ Էջմիածնում ուսումնական մի հաստատություն հիմնելու մասին, մանավանդ որ նախկինում այդ դպրոցների առաջնահերթ խնդիրն էր Վաղարշա-

պատում Կաթողիկոսարանի կողքին հիմնադրված մեր առաջին բարձրագույն դպրոցի ավանդներին հավատարիմ մնալը: Այս միտքը հավանաբար դեռ վաղուց էր հղացել Գևորգ Դ Կաթողիկոսը: Իր ընտրության առաջին տարում՝ 1866 թվականին, ընտրության առիթով նա Կոնստանդնուպոլսում է ունենում Ալեքսանդր Բ ցարի հետ՝ հանդիպման ընթացքում արձարձնելով և ճանաչելով հարցը:

1869 թվականի մայիսի 25-ին Կաթողիկոսը փութով սկսեց ճանարանի շենքի շինարարությունը, որի բացումը կատարվեց 1874 թվականի սեպտեմբերի 28-ին: Նորաբաց ճամբարանը, որը կոչվում էր Ս. Գևորգյան, ուներ արդեն ուսանող դառնալու պարտադիր վաթսուն պարանիներ, որոնք Ս. Էջմիածնի ժամանցավորաց դպրոցի սաներն էին (ճամբարանն ավելի ուշ վերանվանվեց հիմնադրի անունով՝ Գևորգյան Հոգևոր ճամբարան): Բացման օրվանից երկու օր անց՝ սեպտեմբերի 30-ից սկսվեցին ուսումնական պարապմունքները:

Ճամբարանն ուներ դպրոցական և լսարանական բաժիններ: Դպրոցական բաժնում ավանդվում էր Սուրբ Գիրք, Հայոց պատմություն, աշխարհագրություն, հայ մաթեմատիկոսություն, հայոց և օտար լեզուներ (ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն), բնագիտություն, փիեզերագիտություն, մաթեմատիկա, եկեղեցական երաժշտություն, քրամաբանություն և այլն: Լսարանական բաժնում ավանդվում էր եկեղեցական մաթեմատիկոսություն, Հայ եկեղեցու պատմություն, հայոց լեզու և գրաբար, հայոց պատմություն, հայ գրականություն, ընդհանուր եվրոպական գրականություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, մանկավարժություն, ծիսագիտություն, հին հունարեն և այլն:

Թվարկված առարկաներից երևում է, որ ճամբարանի նպատակն էր նախևառաջ հայ դպրոցները բարձրագույն կրթությամբ զինված, ազգային ավանդությունները պահող, հայկեցի դաստիարակություն ստացած ուսուցիչներով ապահովելը:

Գևորգյան ճամբարանը հոգևորականներ պատրաստելու նպատակաուղղելու գործում մեծ դեր ունեցավ հայրկապես Մակար Ա Թեղուրցի Կաթողիկոսը: Նա ուժեղացրեց դասախոսական կազմը՝ հրավիրելով նոր ուսուցիչներ ու բարձրակարգ մասնագետներ: Հոգևոր առարկաների դասավանդումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով Մակար Կաթողիկոսը ճամբարան հրավիրեց Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանին՝ նրան հանձնելով Գևորգյան ճամբարանի աստվածաբանական առարկաների դասավանդումը: Օրմանյան Սրբազանի ազդեցության շնորհիվ էր, որ 1888 թվականին չորս ճամբարանավարներ ձեռնադրվեցին կուսակրոն քահանա և այդպիսով թարմություն մտցրեցին Մայր Աթոռի և Հայաստանյայց եկեղեցու կյանքում՝ իրենց երևից բերելով նորանոր ճամբարանավարների:

Գևորգ Դ Կաթողիկոսի նպատակն իրականացած էր:

Երբ 1903 թվականի հունիսի 12-ին ցարական կառավարությունը որոշում կայացրեց հայկական դպրոցները փակելու և եկեղեցական գույքը բռնագրավելու վերաբերյալ, Գևորգյան Հոգևոր ճամբարանի սաներն ու դասախոսական կազմը գործունե մասնակցություն ունեցան այս որոշման դեմ կազմակերպված ցույցերին ու ելույթներին:

1917 թվականին քաղաքական ու ռազմական անբարենպաստ պայմանների պարտադրությամբ Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի որոշմամբ ղեկավարների 21-ից ժամանակավորապես ճամբարանում դադարեցվեցին պարապմունքները՝ դրանք վերստին սկսելու վճռականությամբ, իսկ ճամբարանի շենքը քրամադրվեց զինվորական հրամանատարությանը:

Հակառակ Գևորգ Ե Կաթողիկոսի բռն ցանկությանը և ջանքերին՝ դժբախտաբար ոչ առաջին Հանրապետության և ոչ էլ խորհրդային իշխանության փորիններին ճեմարանը վերաբացելու Լուսահոգի Հայրապետի ցանկությունը չիրականացավ և այսպես մինչև 1945 թվականը:

Քառասուններեք տարվա իր գոյության ընթացքում Ճեմարանն արդեն տվել էր մի քանի հարյուր շրջանավարտներ և եկեղեցականների մի ամբողջ փառանգ, որոնք անգնահատելի ծառայություններ մատուցեցին պետականությունից գուրկ մեր ժողովրդին, Եկեղեցուն, հայ դպրոցին, մշակույթին, գիտությանը և այլ կարևոր բնագավառներին:

1945 թվականի հունիսին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս և նույն տարում խորհրդային իշխանություններից կարողացավ Ճեմարանը վերաբացելու թայլտվություն ստանալ: Կաթողիկոսի անմիջական հոգաձույթամբ Ճեմարանում դասավանդելու հրավիրվեցին լավագույն մասնագետներ, որոնց մի մասը նախկին ճեմարանականներ էին:

1954-ի մայիսի 9-ին ի տեր հանգյալ Գևորգ Զ Կաթողիկոսը: Մինչև 1955-ի կաթողիկոսական ընտրությունը Հոգևոր Ճեմարանը մնաց մի տեսակ ուշադրությունից դուրս, և նույնիսկ պաշտոնից հրաժարեցվեց բազմամյա վաստակավոր մանկավարժ Մ. Մինասյանը, որի տեսչության իննամյա տարիներից հետո Ճեմարանն արդեն համարվում էր կայացած հաստատություն: Այս դեպքերից հետո Հոգևոր Ճեմարանը կանգնեց բայքայման եզրին, և կարճ ժամանակամիջոցում ուսանողների թիվը իջավ մեկ ու կես տասնյակի:

1955-ին Լուսավորչի գահ բարձրացավ Վազգեն Ա Կաթողիկոսը: Նորընտիր Հայրապետը հաստատությունն անմիջապես վիճակից հանելու համար փոխանական ջանքեր գործադրեց:

Փառք Աստուծո, Գևորգյան Ճեմարանն այսօր իր նախկին բարձրության վրա է, որում անասելիորեն մեծ է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ավանդը: Նորին Վեհափառության ջանքերով հիմնադրվեց և Սևանի Վազգենյան Դպրանոցը, որի սաները ներկա են այսօրեղ: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Դպրանոցի վերելքը հատկապես կապված է բարձրակարգ դասախոսների ընտրության և նոր միասնական ուսումնական ծրագրի մշակման հետ, որն իրականացվեց Գարեգին Բ Հայրապետի անմիջական ղեկավարությամբ և գործոն մասնակցությամբ: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նորացված ուսումնական ծրագիրը նկատի ունենալով, Նորին Սրբության դիմումին ի պատասխան՝ ՀՀ կառավարությունը 2004 թ. հունիսի 13-ի N 833 որոշմամբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը պետականորեն ճանաչեց Աստվածաբանական համալսարան: Այն Հայ Եկեղեցու միակ զրլխավոր աստվածաբանական համալսարանն է:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի վերադեսույնը Ճեմարանի հիմնադրումից մինչև այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոսն է: Ճեմարանի տեսուչներ են եղել՝ Խորեն եպիսկոպոս Գալֆայանը, Գաբրիել եպիսկոպոս Այվազովսկին, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Բագրատ եպիսկոպոս Վարդապարյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը և այլք: Ճեմարանում դասախոսել են այնպիսի ականավոր մտավորականներ, ինչպիսիք են՝ Մ. Աբեղյանը, Ն. Աճառյանը, Ե. Թադևոսյանը, Լեոն, Ս. Լիսիցյանը, Զ. Կարա-Մուրզան, Կոմիտասը, Կ. Կոստանյանը, Ն. Հովհաննիսյանը, Լ. Շանթը, երաժշտագետներ Ա. Բրուսյանը, Ա. Շահմուրադյանը և ուրիշներ:

Այսօրվա Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, 1945-ի վերաբացումից հետո, 55 տարիների ընթացքում ունեցել է 14 տեսուչներ, որոնցից ոմանք մեզ հետ են այսօր, և որոնց ի պաշտոնն շնորհակալություն են հայտնում. նրանք արդեն պատմություն դարձած քաղաքական ծանր ժամանակներում առավելագույնն արեցին մեր հաստատության պահպանման և առաջընթացի համար:

Մեծ է Գևորգյան Ճեմարանի ավանդը ոչ միայն եկեղեցական անդաստանից ներս հոգևորականների պատրաստման գործում, այլ նաև գրականության, գիտության, հասարակական-քաղաքական մտքի, մանկավարժության զարգացման բնագավառներում:

Այսօր Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ունի 160 ուսանող: Ճեմարանում կան տասը լսարաններ, որոնցից յուրաքանչյուրում սովորում են 15-18 սաներ: Այսօր դասախոսում են 42 հոգևորական և աշխարհական դասախոսներ: Նորին Սրբությունը մշտապես մեծ ուշադրություն է դարձնում Ճեմարանում կրթական գործի լավագույն կազմակերպմանը՝ կարևորելով նաև արժանավոր ճեմարանավարների կրթության շարունակումն այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այժմ շատ ճեմարանավարներ իրենց կրթությունն են շարունակում ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Իտալիայում, Սիրիայում և այլուր:

Այսօր, երբ մենք հավաքվել ենք հանդիսավորապես նշելու Աստվածաբանական մեր համալսարանի 130-ամյակը, վեր հանելու նրա չխամրող փառքը, հանրագումարի բերելու արվածը, գնահատելու անցածը և կանխորոշելու գալիքը, պիտի մեկ բան հստակ նկատի ունենանք, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանն անգնահատելի մնայուն արժեք է Հայաստանյայց Եկեղեցու և մեր ժողովրդի համար:

Մեր եկեղեցական արժեքներն ազգային հարստություն ու գանձ են, և մեր ազգային բոլոր արժեքների կենտրոնում առանձնահատուկ փայլով վեր է խոյանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր Հայրապետական Աթոռով և նրա հովանու ներքո գործող Գևորգյան Հոգևոր մեր Ճեմարանով:

Սափար կանգնենք Գևորգյան Հոգևոր Ճեմարանին, քանզի այն ամուր պարիսպ է ընդդեմ օտարամուտ խավար ուժերի, որոնք, ներթափանցելով մեր սրբազան հայրենիք, պառակտում են մեզ՝ սկսած մեր ավանդական ընտանիքներից:

Միևնույն ժամանակ, մի քաղցր պարտականություն ևս ունենա, որն է՝ տեղեկացնել Ձեզ, որ լրանում է ազգիս Սրբազնագույն Հայրապետի գահակալության հինգերորդ տարեդարձը:

Վեհափառ Տեր, թույլ տվեք մեր հոգևոր հաստատությունների ողջ ուսանողության, դասախոսական կազմի և պաշտոնեության, ինչպես նաև՝ Գևորգյան Ճեմարանի հին և նոր բոլոր շրջանավարտների, մեր ողջ եկեղեցականաց դասի անունից ի սրտե շնորհավորել Ձերդ Սրբությանը և մաղթել քաջառողջություն և եկեղեցաշեն գործոց հաջողություն՝ ի փառս, ի շինություն մեր Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն մեր հավաքավոր ժողովրդի:

Ձերդ Սրբություն, ի դեմս Գևորգյան Հոգևոր Ճեմարանում գործող դասախոսական կազմի, այս հանդիսավոր առիթով դարձյալ նորոգում ենք մեր ուխտը՝ ծառայելու մեր Մայր Եկեղեցուն և նրա շնորհագարդ Հայրապետին հոգսաշատ այս օրերում: